

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ

ԼՈՒՍԱՒՈՐՁԷՆ ՅԱՌԱԶ

(Շարունակութիւն, տես Բազմավեյ 1927, էջ 38)

Բ. — ԱՌԱՔԵԼՈՑ ՅԱԶՈՐԴՆԵՐԸ

Եթէ այնքան առաքեալը՝ որ յիշուեցան, և նոյն իսկ երկուքը, ստուգիւ մեր աշխարհն եկած ու սերմանած լինէին աւետարանը, շատ աւելի տարածուած և արմատացած պիտի լինէր ըրիստոնէութիւնը Հայաստանի մէջ՝ քան ուրիշ շատ երկիրներ։ Արդարեւ միջնադարեան հայ գրականութիւնը բաւական թուով եպիսկոպոսաց ու նահատակաց անուններ ալ թողած է այդ առաջին շրջանէն։ Բայց գէթ աղոնք պատմական են արդեօք թէ նոյնպէս վիպական։ Ահա կարեւոր խնդիրը՝ զոր կ'անցնինք քննելու։

Ա. — 1. Առաքելական յաջորդութիւնը ցուցնող զանազան աղիկամի ցուցակներ շինուած են արդի գրողներէ, կազմուած Հայոց, Եդեսիոյ, Կեսարիոյ և փոքր Հայոց քաղաքաց վերագրուած եպիսկոպոսներէ. ինչպէս են Մ. վ. Սալլանթեանի¹, Թ. եպ. Շահխաթունեանի², Արարատ հանդիսի՝ երկու անգամ³, և Կոստանդնուպոլսի 1876ի ժամագրին⁴ հրատարակածները։ Սակայն մոռցան աղոնք՝ թէ Եփրատէն յայն կողմ գտնուած հայ կամ օտար աթոռներն ոչ նուիրապետօրէն և ոչ քաղաքականապէս կապ չեն ունեցած ինչ և մեծ Հայոց հետ մինչև Ե դար, որով անոնց առաջնորդները չէին կարող մեր կարծեցեալ առաքելոց յաջորդութեան մէջ մտնել, ինչպէս դիտեց Օրմանեան ևս⁵։

Ազգապատումի հեղինակը միակ ընդունելի գտաւ Արտագու եպիսկոպոսաց հին

ծանօթ ցուցակը⁶, Չէթ (1330) թուականաւ, գրուած Ջաքարիա ծործորեցւոյն օրով, որ կը յիշուի հոն, — լեզուական սխալներով հանդերձ, — և լոյս տեսաւ Արարատի մէջ՝ ու Սամուէլ անեցւոյն հետ⁷, վերնագրովս. «Յիշատակագրութիւնք եպիսկոպոսաց առաքելական վիճակիս Արտագու, զոր գտաց ի հին յիշատակարանէ միոջ, որ էր գրեալ ՂԸ (649) թուական Հայոց, ձեռամբ Յօնաննէս սպասաւորի, ի սուրբ ուխտէն Մաղարթայ, այսպէս. Յաջորդք առաքելական վիճակիս Արտագու և հրաշագործ սուրբ Շիրմիս Առաքելոյն թաղէոսի, այն որ զԱրգար բարեպաշտ թագաւորն մեր բժշկեաց յՈւռնայ»։ և որ ապա — միշտ ըստ ցուցակիս — ի Շաւարշան կ'երթայ քարոզելու. տեղոյն եպիսկոպոս կը ձեռնադրէ իւր Ջաքարիա աշակերտը, որոյ մասին նահատակուած կ'ըստի Հայոց անպատմական Երուանդ արքայէն. և որուն կը յաջորդեն՝ Չեմենտոս 4 տարի, ու կը վախճանի. Ատրնեբսեհ 15 տարի, և կը նահատակուի բարբարոսներէ. Մուշկամ Մուշեղ պարսիկ՝ 30 տարի, և կը վախճանի. Շահեհ՝ 25 տարի⁸. Շաւարշ աղուան՝ 20 տարի. Ղեռնդիոս՝ 17 տարի, «ի ժամանակս Աւրելիոսի կայսեր Հռովմայ և Վաղարշու թագաւորի Հայոց», — որոնք իրարմէ շատ հեռի էին ժամանակաւ, — ու և կը նահատակուի «Չկնի սորին, կը յարէ, չկարացաց գտանել» թէ ոյց յաջորդեալ են ի տեսչութիւն եկեղեցւոյ առաքելական վիճակիս Արտագու. Այլասի՝ թէ ի ժամանակս սրբոյն Գրիգորի

1. Կրօնագիտ. 96-99. — 2. Ստորագր. Էրմ. Ա. 145-63. — 3. 1868, 57-58. 1884, 296-98. — 4. Էջ 609. — 5. Արք. 42. — 6. Անդ. 41-44. — 7.

1868, 102. — 8. Անեցի, 279. — 9. Լուսանցին մէջ գրուած.

Պարթևի լեալ իցէ ըրիստոնէութիւն, ընդ նմին և տեսուէ եկեղեցւոյ, ի թաքուն և ի խաւարչուտ տեղւոյ՝: Ապա կը թուէ յետ Լուսաւորչին եկող եպիսկոպոսները, «որքան որ կարողացաք գտանել ի հին գրուցատրութիւնէ և արձանագրաց անտի հաւաքելով... գործակցութեամբ Հոգւոյն»: Անոնց անունները կը հասցնէ անընդհատ մինչև հայ թուականին հաստատութիւնը, յետ որոյ դարձեալ կ'ընդհատէ շղթայն ու կը վերջացնէ, չգտնելով ուրիշ անուններ. և որուն կը յարէ Երեմորեցիին՝ թէ «սոյն պէս և մեք զբազում աշխատեցաք, բայց չկարացաք գտանել»: Սակայն արդէն այդքանն ալ բաւական էր «հաւաստի կերպով» համոզելու զՕրմանեան՝ թէ «Արտագու աթոռը Ղևոնդիոսէ ետքն ալ հայրապետներ ունեցած է, որք ձեռնադրած են Սիւնեաց եպիսկոպոսները, թէ և անոնց անունները մեզի հասած չեն»: Իւր ըմբռնած պատմութեան մէջ պէտք չկար գործօն անուանց, ինչպէս առաքելական քարոզութեան մէջ ալ զգացուց անուանց աւելորդութիւնը. կը բաւէր գործն առանց գործողի:

2. Կը կանխեմ դիտել՝ թէ ցուցակդ յօրինուե՞ր է յօգուտ Արտագու աթոռին առաքելականութեան՝ որ կը յեղյեղուի հոն ստէպ: Եւ այս գործը կը պատշաճի այն շրջանին՝ ուր նոյն աթոռն աւելի կարևորութիւն մը ստացաւ, ու սկսաւ ցոյց տրուել հոն առաքելոյն շիրիմ մը, ինչպէս տեսանք վերև: Հետևաբար շատ կասկածելի է նոյն իսկ անկարելի է՝ որ գրուած լինի 649 թուականին. անտարակոյս զբազարի սխալ մը կայ հոգ: Թամնայն ղէպս՝ արտագաղթի ցուցակագիրը բնաւ չէ խորհնոր Հայոց հայրապետութեան յաջորդութիւնը գտնել ու տալ ազգին, այլ ուզեր է իւր վիճակին թաղականութիւնն ապահովել այն շրջանին՝ ուր հայրապետական աթոռը պանդխտութեամբ կը թափառէր հայրենի սահմաններէն դուրս:

Օրմանեանը չհանդուրժեց անոր այդ անձնասիրութեան. և նոյն ցուցակին շարած «եպիսկոպոսներէն» առաւ հայրապետներ ձուլեց, ու բերաւ ձգեց շղթայն թաղէտի և Գրիգորի միջև: Ո՛վ էին և որքան պատմական այդ անձինք, որոնք մեծ մասամբ «արձանագրաց» շրջանէն կանոնաւ պարած, «ի հին գրուցատրութիւնէ» միայն՝ — որ պատմութեան հոմանիշ մը չէ բնաւ՝ — կրնային հաւաքուիլ, ինչպէս յետ Գրիգորի եկողներն ալ: «Դեռ կարօտ ստուգութեան» համարեցաւ ցուցակս Հ. Ալիշան՝ իւր ժողովալ լեզուով: Իսկ Հ. Բ. Սարգսիսեան՝ հրապարուած կեսարու Ղևոնդիոս հայրապետի ազաթանգեղեան թղթին «ճորտեայ քանանալայեանութեանը» ուղղելի բացատրութեանէն, հետևեցու՝ թէ Լուսաւորչին յառաջ «եղան ստուգիւ հաւատացեալ հօտք և հօտապետք» ի Հայս, յիշելով նաև «տոհմային աւանդութեան» ժատնանշած նախկին եպիսկոպոսները՝:

3. Ես պիտի բռնեմ՝ թէ Երեմորեցւոյն ցուցակին «ի հին գրուցատրութիւնէ» և «գործակցութեամբ Հոգւոյն» հաւաքուած անուանք՝ կրնային նպաստել իւր աթոռին փառաց, բայց ոչ և հայ եկեղեցւոյ պատմութեան: Նախագրիգորեան շրջանին համար կը պատասխանեմ. եթէ Արտագ թաղէտի օրերէն և աշակերտէն սկսեալ եպիսկոպոսներ ունենար, ապա չպիտի մոռնային անոնք առաքելոյն կարծեցեալ գերեզմանը, որոյ վրայ հիմնած էին իրենց աթոռը, և զոր անձանթ տեսանք բազում դարերով: Իրական էր հանգստաւանին անյայտութիւնը, և առաքելական քարոզութեան վիշականութիւնն ապացուցուած. ուրեմն թաղէտի արտագական աթոռին և աթոռակալաց գոյութիւնն ալ ազոնց կարգին կը պատկանի:

Կեղակարծ են յետ Լուսաւորչին ցհայ թուական (552) նշանակուած եպիսկոպոսներն ևս: Եւ ծանօթագոյն դարբերուն

1. Արթւ. 1868, 108. — 2. Օրման. Ազգ. 62. — 3. Բզմ. 1926, 291. — 4. Ազգ. 43. — 5.

Արթ. քրիս. 20. — 6. Բզմ. 260. — 7. Ազգ. 184.

մէջ որ և է կրօնական նշանակութիւն և հրապուրիչ կամ ուշագրաւ բան չունէր դեռ Արտազ, ոչ ալ եպիսկոպոսն՝ Վարդանանց ճակատամարտը 451ին կը կատարուէր իւր դաշտին վրայ, Տղմուտի ափին, ուր կը գտնուէր Յովսէփ կաթողիկոսն ալ կղերին հետ. և այդ մեծահանդէս ու մեր քրիստոնէութեան համար վճռական ժամուն աներևոյթ է տեղւոյն եպիսկոպոսը՝ Եթէ ննջէր իսկ, ուզմին շօնադէն պիտի ընդոստնուր։ Ընթանալ տարի վերջ Վահան Մամիկոնեան ևս նոյն զաւառին մէջ կը ճակատի Պարսից դէմ, իւր հետ ունենալով զՅովհան կաթողիկոսն, և հող ալ չի տեսնուիր կարծեցեալ վիճակաւորը, զէթ յարգանք մ'ընծայելու Հայոց հայրապետին և իւր զխոյն։ Հայ եկեղեցական ժողովոց ցուցակները կան, ինչպէս Արտաշատուն 450ին¹, և Դունի հինգը՝ 506, 555, 606 և 607 թուականներուն², որոց մէջ անծանօթ են Արտազու առաջնորդները։

Եթէ անոր երկու կամ նոյն իսկ մէկ եպիսկոպոսին հանդիպէինք պատմութեան մէջ, դիրքին կը լինէր հետևեցին անոր նախորդներն ու յաջորդներն ալ։ Բայց արտազեցեաց այդ իսպառ անյիշատակութիւնը՝ չի ներքեր մեզ հաւատք ընծայել արտազեան անագան ու նպատակաւոր ցուցակին։ Զի մեր եպիսկոպոսական աթոռաց աղբան հնագունին՝ — ինչպէս կ'ուզուի՝ — ու կարևորագոյնին ժառանգորդները չէին կրնար միանգամայն անտես ապրիլ մեր անցեալ պատմութեան այն բոլոր առթից մէջ՝ որ անոնց երեկը կը պահանջէին՝ ըստ եկեղեցական կարգաց։ Այն որ կայ՝ աներևոյթ չի մնար միշտ, և այն որ աներևոյթ է միշտ՝ չկայ։ Այս բացասական փաստերէն զատ տեսնեց զրականն ալ, թէ թ դարուն դեռ սեպահական եպիսկոպոս չունէր այդ զաւառը, և պատահաբար օտար մը կը նստէր հոն³, Հետևաբար արտազեան ցուցակին բոլոր

անունները յարմարական և անզոյ անձինք էին, թէ յետգրիգորեան քաջածառօթ շրջանին, և թէ ևս առաւել նախընթաց անգրի ու մթին դարերու ընծաշուանները։

4. Եւ հաւա այդ յիշատակարանն իսկ, որ «ուսումնարարութեան հիմ կազմելու հեղինակութեան զուրկ չէր» յաջա Օրմանեանի, «առաջնորդ» բռնեց նա և կերտեց իւր ու հայրապետաց փայլուն շարքը, այն հաւատքով՝ թէ «ոչ ներքին և ոչ արտաքին պատմութիւններ երբեք ղոճարութիւն կամ անյարմարութիւն չեն ներկայիւր աշխարհի մէջ»։ Որքան աւելի կուտակուէին ղոճարութիւնք և անյարմարութիւնք, այնքան աննշմարելի կը դառնային Ազգապատմութիւն հեղինակին։ Յուցակին օժանդակ առաւ նա ուրիշ նոյնչափ տկար աղբիւրներ ևս, որոնց անշուշտ ծառայած են նաև արտազեան ցուցակագրին։ Ընդհանուր հերքումէս վերջ՝ անհատաբար ևս զննենք պահ մը ցուցակին անձինքը, և մատնանշենք ուրիշ ժխտական կողմերն ալ։

Արտազու անզոյ աթոռին առաջին եպիսկոպոսն է Զաքարիա, որ հանուած է թաղէի կեցակարծ վկայաբառերով, — և կրկնուած ասոր միջնադարեան յարասութեան, — ուր առաքեալը կ'ըսէ հաւատացելոց՝ թէ «եսու ձեզ առաջնորդ զՍաքարիաս սիրելին Քրիստոսի, որ է իմ լծակից և պաշտօնեայ Տեառն»։ Օրմանեան մեր ազգը կամ զՍաքարիաս շողովելու համար՝ վերնատան մէջ ևս նստեցուց և հրեղէն լեզուաց մասնակից ըրաւ զայն⁴։ Յետոյ թաղէի անզոյ գերեզմանին հետ անորն ալ կը յայտնուի կիրակոսի ծառօթ տեսեան մէջ⁵։ Նաև թաղէոսի կանոնաց ծայրը կը ծանուցանէ նա ինքզինքը, գրեթէ այսպէս. «Զայս օրէնս ղրութիւնս ևս Սաքարիաս աշակերտ սուրբ առաքելոյն թաղէոսի գրեցի՝ որպէս լուսայի նմանէն՝ ամենայն հաւատացելոց ի Քրիստոս»։ Բայց կանոնացս ու տեղեկու-

1. Երեւ. 77. — 2. Փարպ. 391. — 3. Երեւ. 22. Փարպ. 124. — 4. Գր. Գրորգ. 41, 73, 146, 149,

151. — 5. Բզմ. 1926, 291. — 6. Ազգ. 48. — 7. Ս. Գր. Բ, 58, 72. — 8. Ազգ. 88. — 9. Ս. Գր. Բ, 90.

թեանս վաւերականութեան Օրմանեան անգամ չհաւատաց. և ըսաւ՝ թէ «յատուկ և մանրամասնեալ յիշատակներ կը պակսին» այս առաջին հայրապետի գործունէութեան մասին, թողով լոկ իւր անունը յիշեալ կեղծ յիշատակարանաց մէջ, որպէս զի անոցմէ չգանազանէր իւր գոյութիւնն ալ:

Արոր կը յաջորդէ Զեմենտոս՝ ըստ ցուցակին, անուամբ դարձեալ ծանօթ վկայարանութեան, ուր նոյն անունը կրող անձն աշխարհական մ'է, «իշխան ի վերայ ամենայն ճանապարհաց և հաւատարիմ ի դրան արքունի»։ Նախ սխալմամբ կը սպանուի առաքելոյն դահճէն, և անոր ձեռքով կը վիթաւկենդանայ, և ուրիշ հաւատացեալաց հետ կը մկրտուի՝ իբրեւ «առաջնորդ» կամ գլուխ անոնց՝ իւր բարձր աստիճանով. ու կը մեկնին¹, առանց այլ ևս տեսնուելու ինքն առաքելոյն կենսագրութեան մէջ, իսկ թաղէի վարուց կ'ընթացորեան յարասութեան գրիշն աւելի տալ միտք, անոր նահատակուիլ կու տայ առաքեալէն յառաջ²։ Արդ՝ չորս երեակայութիւնը կ'աշխատին կազմելու այս ղեմը. հին վկայագրեր կը կերտէ անոր անձն աշխարհիկ ձեւ տակ. յարասութեանը կը մարտիրոսացնէ³. արտագեան ցուցակը զայն եպիսկոպոս կը ձեռնադրէ, և Օրմանեան՝ Հայոց «հայրապետ» կ'ընտրէ։ Անուրդի դրուած վաճառ մ'է. ով ինչ գին տայ՝ զայն կը ստանայ, չուենալով ինքնիկ սեպական ոչ գոյութիւն, ոչ արժէք։

Երբորդն է Ասրեմբան, որ կ'ապրի լոկ արտագեան մտացածին ցուցակին և Ազգապատմիկ մէջ, որ չվարանցաւ անոր կենսագրութիւնն ալ կերտել⁴։ — Ասոր յաջորդը Մոռէ նոյն ազդերներէն կը ծագէ, և յիշուած է նաև Միւնեաց պատմաբան (1299ին), որուն լոյս տուող «հին գրուցաց» համեմատ՝ քրիստոնեայ Գողթնացի զայն «առաքեն առ սուրբն թաղէ»

իրենց եպիսկոպոս ձեռնադրելու. կ'երթայ և հոն կը մնայ։ Միք պիտի տեսնենք՝ որ Գողթնան քրիստոնէութիւնը շատ յետաժուտ է. որով չէր կարող այս շրջանիս եպիսկոպոսացու Մոռէ մ'ունենալ։ Առտագեան ցուցակին ժամանակագրութեամբ՝ անոր ընտրութիւնը կը հանդիպի ԶԷթուին. և ըստ Օրբելիանին՝ առ թաղէս ձեռնադրուելու երթալով, սա՝ որ Բարթողոմէոսէ յառաջ նահատակուեալ էր, — որով անոր աղօթքին մէջ կը յիշուի⁵, — տակաւին ողջ կը լինի. և մեք կ'ունենանք իբր հարիւրամեան առաքեալներ։ Չէ կարելի «առ սուրբն թաղէ» բառերով՝ Արտագու թաղէական աթոռն իմանալ և ոչ առաքելը, ինչպէս Կործնց Օրմանեան⁶. զի այդ պարագային՝ մեզ ծանօթ հայերենով պէտք էր ըսել «ի սուրբն թաղէ»։ Ըստ որում սա՝ մարդոց յատուկ է, և ի՞ տեղերու. Հող Օրբելիանի զոյցքը պարզապէս առասպելներ կը կարկատէին, և ինք կ'արձանագրէր։

Արտագու հակապատմական ցուցակէն միայն գիտենք Շահենի, Շասարի ու Ղևոնդիոսի անուններն ալ. որոնք եթէ պատմաբանութեանը դատապարտուած են չգոյուրեան, միւթիթաութիւնն ունին գէթ «սուրբ մակդիրն» ընդունելու իրենց վրայ Ազգապատմիկ մէջ, որ անոնց իւրաքանչիւրին կենսագրութիւններ ալ պարզեց⁷։

Բ. — 1. Առաքելական յաջորդութեան ուրիշ ճիւղ մը կը բանայ Օրբելիան Գողթնացեալի մէջ. և այս ձեռնարկին օժանդակ են իրեն յիշեալ «զոյցք հին ժամանակաց»։ Բարթողիմէոս, կ'ըսէ նա, Պարսկաստանէն կու գայ ի Գողթն, — օտվրած անշուշտ նոյն առաքելոյն վկայութեան⁸, — կը քարոզէ ու կը մկրտէ ժողովուրդը, եկեղեցի՝ որ կը շինէ, և «զոմն յաշակերտաց իւրոց կուսմի անուն»՝ եպիսկոպոս կը ձեռնադրէ անոնց, և ինք կ'անցնի «ի վանանդ գիւղ»։ Կուսմի շուտով կը ձանձրանայ աթոռէն ու կը փոխուի ի լա-

1. Ազգ. 89, 44. — 2. Ս. Բեք, 55, 56. — 3. Ան. 78. — 4. Ազգ. 49. — 5. Օրբել, 13. — 6.

Ա. 41. — 7. Ազգ. 49. — 8. Ազգ. 55-59. — 9. Ս. Բեք, ԺԹ, 24.

ւագոյն կեանս: Իսկ Գողթնացիք անոր տեղ կ'ընտրեն «զխուժիկ ոմն Բաքիյաս անուն»¹. և ասոր ալ կ'ուզեն յաջորդեցնել «զոմն մի Մուշէ անուն», զոր տեսանք Թաղէոսի զրկուած ձեռնադրութեան, և հաստատուած Արտագի մէջ՝ Գողթնացիք պահելով հանդերձ իրենց քրիստոնէութիւնը, այնուհետեւ կը մնան անառաջնորդ և «անսէրունչք բնակեալ այսր անդր»². և ոմանք ձգնաւորութեամբ կ'անցնէին Գարուայ լեռան վրայ, քարոզչի պաշտօն ալ կատարելով, և «զբազումս ուսուցանելով յոլով ժամանակօր», մինչև որ Լուսաւորիչ կը նորոգէ անոնց աթոռը, եպիսկոպոս տալով զՄովսէս, որուն կը յաջորդեն Սահակ, Չրեանդատ և այլք անընդհատ մինչև պատմչին օրերը՝:

Այս տեղեկութիւնք և անուններն ընդունուեցան Շահաթունեանէն³, Հ. Ալիշանէն⁴ և ուրիշներէ, նոյնպէս և Օրմաւնէանէն, որ ուղղեց ևս Օրբելեանը, «իւր կարծիքով» զՄովսէս անմիջական յաջորդ դնելով Մուշէի, և Գողթնաց ամբողջ անընդհատ պահելով⁵. Իսկ անոնց եպիսկոպոսաց ձեռնադրիչ նշանակելով Արտագու «հայրապետները»⁶: Այս հաշուով՝ Գողթն նախազրիգորեան քրիստոնէութեան կեդրոններէն մին կը լինի, և Բարթոլոմէոսի երկանց ծնունդ ու զարմ. Գեղեցիկ գրոյցք և գեղեցիկ կարծիք այդ բոլորը, որոնք սակայն զժբախտաբար պատմութիւն չեն ու կ'ընդհարին պատմութեան դէմ, որ նախ՝ չի ճանաչեր բարթոլոմէան որ և է քարոզութիւն ի Հայաս. և երկրորդ՝ մեզ կը հաւաստէ՝ թէ ոչ միայն եպիսկոպոսութիւն, այլ քրիստոնէութիւն անգամ չկար ի Գողթն, ոչ յառաջ և ոչ տակաւին յետ Լուսաւորչին՝ մինչև Գ. դարու վերջերը, ուր ս. Մեսրոբ անոր առաջին քարոզիչը կը լինի: «Իմիսալ իշխանէր, — կը գրէ անոր աշակերտն ու զօրմակիցը Կորիւն, — յանկարգ և յանդարման տե-

ղիս Գողթան»⁷. և տեղւոյն իշխանին օգնութեամբ «ձեռն արկանէր զգաւատով»⁸. գերեալ զամենեւնահա՝ ի հայրենեաց աւանդելոց և ի սատանայական դիւապաշտ սպասաւորութենէն՝ ի հնազանդութիւն Գրիստոսի մատուցանէր⁹: Շեղագրեցի զգաւատով և զամենեւնահա բառերը, որպէս զի ցուցնեմ՝ թէ իւր զործն ամբողջովին հեթանոս մնացած զաւառին հետ էր, և ոչ թէ «զգողեալ կոապաշտութիւնն սրբել», ինչպէս ըսաւ Խորենացին ու կրկնեց Օրբելեան¹⁰, ինչ որ հեթանոսութիւնը չափաւոր ու զաղտնաթաքոյց ցուցնելու երեւոյթն ունի:

Երկրորդ անգամ կ'երթայ հոն Մեսրոբ՝ հայ գրիւն ուսուցանելու¹¹. և ոչ յառաջ՝ ոչ յետոյ որ և է եպիսկոպոսի զօրծակցութիւնը չունի հոն. այլ միայն «կարգէր յամենայն գիւղս զաւառին դասս սրբոց վանականաց», որոնք տակաւին չկային և նոր կը հաստատուէին, ինչպէս չկար վիճակաւոր եպիսկոպոս ևս, զոր Մեսրոբ ալ չի դնիր. ապա թէ ոչ՝ Կորիւն պիտի յիշէր և զայն, ինչպէս կը նշանակէ Սինեաց եպիսկոպոս տալը¹²: Արդարև յետոյ ևս Արտաշատու 450ին և Դունի 506ի ժողովոց անդամներու ցուցակաց մէջ դեռ Գողթան առաջնորդը չեն տեսնուիր¹³: Եւ նախ Դունի 555ի ժողովին մէջ երևան կու գայ «Յոյս՝ Գողթան եպիսկոպոս», Սինեաց Պետրոս եպիսկոպոսի հետ¹⁴. և յետոյ նոյն քաղաքի 606ի և 607ի գումարմանց մէջ՝ «Սիւն Գողթան եպիսկոպոս», Սինեաց Գրիստափորի հետ¹⁵. և 768ին Պարտաւայ ժողովին մէջ՝ «Եւսայի՝ Գողթան եպիսկոպոս», Սինեաց Սաղովկայ հետ¹⁶:

Կը հետևի՝ որ Օրբելեանի նշանակած Գողթան եպիսկոպոսունք, առաքելոց օրերէն սկսած և ապա Լուսաւորչէն շարունակուած, գոյութիւն չեն ունեցեր մինչև 9 դար. և պատմչին լոկ փափաքն էր

1. Օրբել. 13-14. — 2. Օրբել. 14-15. — 3. Ստ. բար. Էջմ. Ա, 155. — 4. Սիսակ. 312. — 5. Արդ. 54. — 6. Կորիւն, 7. — 7. Խորեն. Գ, Է, 4. Օր-

բել. 37. — 8. Կորիւն, 14. — 9. Անդ. — 10. Եղեւ. շէ՛ 22. Գր. Թորոս, 41. — 11. Գր. Բորոս, 78. — 12. Անդ՝ 146, 149, 151. — 13. Գր. Գեղեցիկեցիք:

անոր նախագրիգորհան քրիստոնէութիւնն ու եպիսկոպոսութիւնը: Անոր լոռներն ու ձորերը ընդդիմացան Տրդատայ արոյն ու Լուսաւորչի խաչին, և պիղդ բռնեցին իրենց հին կրօնքը, իսկ առանց անտաւաւ ըսան լուսոյն՝ եպիսկոպոսունք ինչ գործ ունէին հոն:

3. Ազգապատմութիւնը ճարտարութիւններէն մին եղաւ՝ Գողթան նախագրիգորհան անգոյ առաջնորդները «Սիւնեաց եպիսկոպոսներ» ընել¹, որուն կը հակառակէր անոնց տոհմասէր պատմիչն ինքնին: Սա խօսելով Գողթնացւոց մասին, կ'ըսէ. «Քայց զԽեա, զի ոչ եթէ հատուածեալ էին սորա ի Սիւնեաց, այլ յառաջն մինչդեռ ոչ էին հաւատացեալ (Քայք), և ոչ էր կարգած աշխարհա Հայոց եպիսկոպոսոց, սորա (Գողթնացիք) առանձինն ունեին սեռաւոր», որոնք ուրեմն Սիւնեաց չէին. և թէ վերջինքս նախ Լուսաւորչէն եպիսկոպոս կը ստանան զԳրիգորիս, որուն կը յաջորդեն Մաշտոց, Անանիոս և այլք²: Այս՝ ըստ Օրբելեանի, որոյ տուած անուններն ընդունեցաւ և Հ. Ալիշան³:

Իսկ ըստ պատմութեան՝ Սիւնեցիք ալ Գողթան պէս նաեւ յետ Լուսաւորչին եպիսկոպոս չունեցան բնաւ մինչև ցս. Մեարոբ, որ անոնց առաջին վիճակաւորը տուաւ: Յետ գրոց գիւտին երբ սկսաւ իւր հոգեւոր մշակութիւնը, «ի Սիւնական աշխարհն ելանէր», կը գրէ ժամանակակից վկայն Կորիւն. և Վաղինակ իշխանին օգնութեամբ — որովհետեւ ձեռնառու եպիսկոպոս չկար տակաւին, մինչ իշխող տոհմը քրիստոնեայ էր Լուսաւորչի օրերէն⁴, — իւր ազդեցութիւնը կը տարածէ «բովանդակ ի վերայ սահմանաց Սիւնեաց», մանուկներ կը հաւաքէ՝ «առաւել զգազանամիտ զվարինազոյն զգիւղաբարոյ կողմանց», և կը կրթէ զանոնք, «մինչև ի նոցունց իսկ ի վարինեացն եպիսկոպոսն տեսուչս եկեղեցւոյն Սիւնեաց կարգել,

որոյ անունն կոչէր Անանիոս»⁵: Ահա ուրեմն Սիւնեաց առաջին վիճակաւորը. և ադոնց վերագրուած այդ բարոյական անկումն ալ ապացոյց է՝ թէ նախագրիգորհան ըրջանին անոնց մէջ ևս չէ եղած բնաւ եպիսկոպոսական աթոռ, չհաշուելով առասպելական Ստաթէոսը՝ զոր տեսանք⁶, և կամ յետոյ «զԳրիգոր եպիսկոպոս Սիւնեաց», զոր Ժ դարուն ստեղծեց Մեարոբ երէց՝ իբրեւ ուղեկից մեծին Ներսեսի ի կեսարիա՝ կամ փոխ առաւ «ի Հայոց ձաւցորդաց յԱրեւելից գրոց», ուսկից քաղեց իւր գործը⁷: Եւ աթոռոց հաստատութենէն յետոյ ևս Սիւնեաց ու Գողթան առաջնորդները զատ էին, ինչպէս շեշտեցի վերև Դունի երեք ու Պարտաւայ մողովներու մէջ:

3. Լուսաւորչէն յառաջ հայ եպիսկոպոսի միակ ու հարազատ վկայութիւն մ'ունինք, Մեարութանի՝ Եւսեբիոս կեսաւրացւոյ կողմանէ: Դեկոս կայսեր հալածանաց (249ին) պատճառած ուրացում թեանց համար՝ եպիսկոպոսները զանազան կողմեր ապաշխարութիւն կը կարգէին: Այս նպատակաւ նաեւ Դիոնիսիոս աղբւսանդրացի պէսպէս նամակներ գրեց՝ «Նոյնպէս, կ'ըսէ պատմիչը, և որոց ի Հայաստան (τοῖς κατὰ Ἀρμενίαν) գրեաց թուղթ վասն ապաշխարութեան, գոլով եպիսկոպոս Մեարութան (Μεραυτάνης)⁸», այս ըստ տառացի թարգմանութեան: Հ. Ալիշան ի վեր հանեց ազոր կարեւոր դիրքն իբր ընդհանուր առաջնորդի քրիստոնեայ Հայոց⁹: Լրկիէն¹⁰ և Հաննիկ աղոր աթոռը փոքր Հայոց Սեբաստիոս քաղաքին մէջ հաշտեցին¹¹: Գեղզը շահանեցաւ այդ կարծեաց, նկատելով՝ որ փոքր Հայոց առաջնորդը Գեղզ դարոց մէջ «որչափ գիտնեց»՝ հոռոմ կամ աստուածաշնչական անուններ կը կրէին. որով «Մերութեան» որոնելի է ի մեծ Հայոց, և սերած Արծրունեաց տոհմէն, որ տուաւ համանուն

1. Ափփ. 49. — 2. Օրբել. 16. — 3. Նոյն՝ 13, 363. — 4. Սեպ. 20. — 5. Ագաթ. 597. — 6. Կորիւն, 14. — 7. Ասմ. 42. — 8. Սոփրեք, Է, 25. —

9. Ափ. 188. — 10. Եւսեբ. 2, Ից. — 11. Արտ. 80-81. — 12. Հմմտ. Տէր Միսնա. 15.

մատնիչը Գ դարուն. իսկ աթոռը կ'ախորժի ի Ռշտունիս դնել¹:

Եկեղեցւոյ պատմութեան նշանաւոր մասնագետը Լևոն Դիւլէն² նոյնպէս զբաղեցաւ սոյն խնդրով, և տկար գտաւ Գնդերի տեսութիւնը, անոր դէմ իբր փաստ տալով նախ՝ մեր աւանդութիւնը, որ Հայոց դարձը Տրդատայ ժամանակ կը նշանակէ: Յետոյ ցոյց տուաւ ուրիշ երկու հայանուն եպիսկոպոսներ. մին Հորմիզէս (Ուրմիզդ) առաջնորդ եղմանայի Բ Հայոց, և միւսը Ներսէս՝ հովիւ կիրաստնի՝ Պաղմտնական Պոնտոսի մէջ: Եւ հուսկ զիտեց՝ որ Դեկոսի հալածանքն և անոր պատճառաւ ուրացեալը չէին կարող փնտտուիլ բնաւ մեծ և ինքնավար Հայաստանի մէջ, որ թէպէտ հպատակ, բայց առանձին թագաւորութիւն էր, և կայսերական իշխանութիւնն և օրէնքներ ուղղակի չէին հասնիր երբեք հոն: Որով Մերութան և իւր ժողովուրդն որոնելի են փոքր Հայոց մէջ, որ Գ դարուն կապաղովկիոյ կուսակալին ներքեւ էր, և ուղղակի կերպով զգաց հալածանքը³: Տէր Մինասեանց վարանեցաւ ճշդել անոր աթոռն երկու Հայաստաններու մէջ, և հակեցաւ մեծին կողմը⁴, մինչ Տուռնբրիզ հեռացաւ Գնդերէ, և հետեցաւ Դիւլէնի տեսութեան⁵:

Իսկ Օրմանեանի անարգել զրիչը զայն փոխադրեց Արտագու անգոյ աթոռին վերայ, իբրեւ յաջորդ Ղևոնդիոսի⁶, յենով ուժայէտ և անապացոյց ենթադրութեանց: Ուզեց՝ որ Եւսեբիոսի Հայաստանը նշանակէ մեծ Հայքը, «ինչպէս որ բոլոր հին հեղինակներու մէջ կը կարգուի, և ոչ երբեք փոքր Հայքը, որ անգրգան գործածուած անունն մըն է՝ Պոնտոսի և Կապաղովկիոյ մէկ մասին տրուած»⁷: Սակայն «բոլոր հին հեղինակները», զորս ինք տեսած կարծեւ է, բոլորն ալ իւր դէմ կ'ելնեն: Վասն զի Եւսեբիոսէ դարեր յառաջ սկսելով, — որ քիչ մը խոտոր կը համեմատի անագանին հետ, — Եփրա-

տէն յայն կոյս գտնուած ամբողջ երկիրը մինչև ի Կապաղովկիա՝ Փոքր Հայաստան էր յոյն մատենագրաց համար, ինչպէս ցուցած են պատրիարքութեան խնդրոյն մէջ⁸: Հետեւաբար կեսարացի պատմիչն Արմենիոն կրնայ նշանակել մեծն ու փոքրը միանգամայն. և Դիւլէն իրաւունք ունի իւր սուր զիտողութեանց մէջ՝ փոքրին իմաստն ընծայելով անոր:

Ուշադրութեան արժանի է նաև Կեսարիոյ առաջնորդաց զաւագանագիրը, յարած վերոյիշեալ Արտագեան ցուցակին, որուն հեղինակ կը նշանակուի «Ստեփանոս տարօնեցի, որ էր աշակերտս սրբոյն Մեսրովպայ»⁹. և իբր ասոր բնագրէն զազափառութեւ է հրատարակուած օրինակը 1330 թուին: Արդ՝ ցուցակիդ մէջ կեսարիոյ եպիսկոպոսաց կարգին դասուած է՝ յետ Ալփիանոսի՝ «Մեհրոման եպիսկոպոս, որ կառավարեաց զեկեղեցին Քրիստոսի յամս ինչ»¹⁰: Սխալ է բնականապէս անոր աթոռն ի կեսարիա դնել, երբ կեսարացի պատմիչը զայն Հայոց առաջնորդ ցոյց կու տայ: Չենք կարող երաշխաւորել նաև Տարօնեցւոյն անունը: Բայց կաներև է՝ որ ցուցակագիրը Եփրատի հակառակ կողմը կը տեսներ Մերութանայ աթոռը. և ուրիշ ոչ ոք մեր հին մատենագրերէն ուզեր է Եւսեբիոսի տուած այդ յայտնի վկայութիւնը գործածել յօգուտ մեծ Հայաստանի:

Եկեղեցին, առաջիկոց օրերէն սկսած բարգաւաճիլ հռովմէական կայսերութեան սահմանաց մէջ, իրեն որսացեր էր նաև անդրեփրատեան Հայաստանի բնակչութիւնը՝ որ նոյն սահմանաց մէջ կը մտնէր. և անունը վրայ կարգեր էր նաև համագգի ու համաբեղու հովիւ մը. թէ որ ժամանակէն սկսեալ՝ յայտնի չէ: Բայց Մերութանայ միակ լինելը՝ — ինչպէս կը տեսնուի վկայութենէն՝ — ապացոյց մ'է՝ թէ իւր հօտն ալ զանազան եպիսկոպոսաց ներքեւ բաժնուելու չափ ընդարձակութիւն


1. Գնդ. Գ. Բ. 159-162. — 2. L. Duchesne, *Mét. Nic.* 107-8. — 3. Տէր Մինաս. 13, 16. —

4. Tourn. 420, 421. — 5. Ասա՝ 109. — 6. Աստգ. 61-62. — 7. Բգմ. 1926, 180. —

չունէր տակաւին, Եւ վերջապէս եթէ մեծ Հայք 249ին աղքատ քրիստոնէից բազմութիւն ունենային՝ եպիսկոպոսով հանդերձ, կարելի չէր՝ որ կէս դար վերջ ազգովին դարձին սկիզբը՝ հօտ և հովիւ բոլորովին անհետ լինէին, ինչպէս եղած պիտի տեսնենք յետոյ:

Ամփոփելով, այն բոլոր աթոռներն ու եպիսկոպոսներ, զորս աւանդութիւնը կ'ընծայէ մեծ Հայաստանի՝ առաքեալներէն սկսելով մինչև ցլուսաւորիչ, ուղղակի կը հակառակին հին վաւերական պատմութեան, որ անոցմէ ոչ միոյն գոյութիւնը չի արդարացներ:

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ



«ԱՐՄԵՆԻԱ» ԵՒ «ԷՐՄԵՆԻԱ»

Յարգելի Պր. Արշակ Սափրաստեան Ալլագայի մէջ հետաքրքրական գրախօսական մը ունի գերման գիտնական Լեհման-Հաուպտի առուար մէկ երկին՝ «Armenien einst und jetzt»-ի վրայ, Երկու հատորէ բաղկացեալ այս գործին առաջինը հրատարակուած է արդէն 1910ին, իսկ երկրորդը ահա նոր լոյս կը տեսնէ: Ինչպէս կ'երևայ, Պր. Արշակ Սափրաստեանի յօդուածաշարքը գեռ պիտի չարժանակուի, հետեւաբար յարմար կը դառնայ չափաւել գրախօսականին վերջին, այլ այսօր իսկ գրել Արմենիա և Էրմենիա բառերու վրայօք, քանի որ առոնց մասին Պր. Սափրաստեան իր խօսքը լնացուցած կ'երևայ: Յարգելի յօդուածագիրը Ալլագայի 18 զեկա. 1926ի թիւին մէջ կը գրէ. «... Պիսիթուի ժայռի այդ նշանաւոր արձանագրութեան (Դարեհի) նորագոյն և խորունկ ուսանողն է գերմանացի Ֆրանց Վայսբախ, որ վերստին ցննութեան ենթարկելով Դարեհի այդ բեւեռագիրը, գտաւ որ պարսիկ թագաւորը կը գործածէ երկու ձեւ Հայաստանի վերաբերմամբ:

Ան կը յիշէ նախ «Արմենիա» կոչումն և ապա «Էրմենիա», երկուքով ալ ակնարկելով Հայաստանի՝ որպէս աշխարհագրական միաւոր»:

Թէ արդեօք Լեհման-Հաուպտ ալ Էրմենիա ձեւը կը գործածէ, անծանօթ է ինծի, սակայն երբ Պր. Սափրաստեան կը յիշէ, որ Ֆ. Հ. Վայսբախ գործածեր է Էրմենիա ձեւը, Դարեհի արձանագրութիւնները ուսումնասիրած պահուն սխալի մը մէջ կ'իյնայ: Միանգամ ընդմիջու փառատելու համար ատիկա, ըսեմ, որ Պր. Ֆ. Դ. Ֆ. Հ. Վայսբախ իր երկերուն մէջ, որոնք քանի մը անգամներ հրատարակուելով աւելի՛ ճոխացած են, չէ՛ գործածած Էրմենիա ձեւը: Աւելի վստահ ըլլալու համար դիմեցի իրեն, գիտնական բարեկամիս, որ իր կարգին հաստատեց ինծի, թէ իր Դարեհեան արձանագրութիւններու թարգմանութեանց մէջ չէ՛ գործածած Էրմենիա ձեւը, որ համեմատաբար նոր բառ մըն է: Արդարեւ Դարեհի արձանագրութիւնները (520 Ք. ա.) միայն կը յիշեն Արմենիա, Արմինա ձեւերը են: Ստորև կու տամ երեքըզգուան այդ արձանագրութիւններու՝ Հայաստանը և Հայերը բնորոշող բառերը:

Հայաստան } Հին պարսկերէն Էրմենիա
նաեւ } Արմինա
Հայ } Արմինիս

Ինչպէս կ'երևայ, անկարելի է Էրմենիա ձեւը գտնել այս բառերուն մէջ, հետեւաբար ամփոփելով պէտք է ըսել, որ Դարեհ գործածած է միայն Արմինիա եւայն ձեւերը, և թէ Էրմենիա համեմատաբար նոր բառ մըն է, որ հաւանօրէն Արմինիայի ազատագեալ մէկ ձեւն է:

Լոյսհեղ. 15 յու. 1927

ՅԱՍՈՒ ԳՐԻԳՈՐ

1. Die Keilinschriften der Achämeniden, von Weissbach.

Die Achämenideninschriften zweiter Art, Leipzig 1890 v. W.

Die altpersische Keilinschriften, Leipzig 1908; v. W. n. W. Bang.